

չե որ այդ աստիճան փչացած, կեանքի մէջ ոչինչ բարոյական հաստատ սկզբունք, բարոյական կրթութիւն չունեցող հասարակութիւն ընդունակ կը դառնայ առաջադիմական որ և է կանոնաւոր շարժման:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

Հինգշաբթի, յունվարի 8-ին հայ գերասանական խումբը ներկայացրեց «Խելքից պատուհաս» (Горе отъ ума) կոմ. 4 արարուածով Գրիբոեդովի, թարգ. ոտանաւորով պ. Տէր-Աստուածատուրեանի:

Գրիբոեդովի այդ գրութեանը, թէ իր բովանդակութեամբ և թէ լեզուի կողմից ուսաց գրականութեան մէջ առաջնակարգ տեղ է բռնում:

Ձը կամենալով պատմել Գրիբոեդովի պատուհասի բովանդակութիւնը, հարկաւոր ենք համարում նկատել, որ այդ գրութեանը մի կտիւ, մի անհատ պատկերով է ներկայացնում հին սերունդի, որի ներկայացուցիչը Ֆամուսովն է, և նոր սերունդի մէջ, որի ներկայացուցիչը Չագլիւն է հանդիսանում:

Կոմեդիան նկարագրում է իրան ժամանակակից Մոսկվայի հասարակութեան կեանքը, նա, ուստի քննիչների վկայութեան համեմատ, բաւական պահածութիւններ ունի, Չագլիւն անձնաւորութիւնը անաջող է, իսկ ֆամուսով գործող անձինք շատ գեղեցիկ են նկարագրված:

Հին սերունդի ներկայացուցիչը, Ֆամուսով շատ գեղեցիկ նկարագրված է իբրեւ հասարակութեան անգամ և իբրեւ ուստ աստիճանաւոր, իսկ Չագլիւն, նոր սերունդի ներկայացուցիչը, իր հակառակորդների պակասութիւնները կրիտիկային ենթարկել համարձակվող այդ ազատասուր բաւական ան-

գոյն, թոյլ և ինքն իրան հակասող մի բնաւորութիւն է:

Ուսակցութիւններից մէկի ներկայացուցիչները ամբողջապէս դուրս են բերված պիեսայի մէջ, սկսելով Մոլչալնից մինչև Ֆամուսով, միւս կուսակցութեան ներկայացուցիչը, Չագլիւն, միայնակ է և նրա ասածներին ոչ ոք արձագանք չէ տալիս:

Գրիբոեդովի լեզուն ազատ, կենդանի և խօսակցական լեզու է այնպիսի ոտանաւորներով գրած, որոնցից գրեթէ իրաւքանչիւրը դարձել է առած և անգագար գործ է անվում խօսակցութեան ժամանակ:

Հայոց բեմի վրա պիեսան համեմատաբար շատ լաւ անցաւ: Նրեում էր, որ գործին մասնակցողներից իւրաքանչիւրը բարեխաղաք էր վերաբերվել իր պարտականութեանը և աշխատել էր կարելութեան չափ աջակցել պիեսայի ամբողջութեանը, որ բաւական լաւ էր:

Նրեում էր, որ բեմի տեսքով, կամ նրա գործը կատարող անձինք, լաւ ուսումնասիրած էին պիեսան և խաղացողներին մեկնել էին պիեսայի բոլոր կէտերի նշանակութիւնը, գործողութեան ժամանակ գերասանների բռնելի գրեթէ, նրանց շարժումները և այլն:

Այն բանը մեզ այնքան նկատելի էր, որ կարծես մեր գերասանները և գերասանութիւնը բացառութեամբ ա. և պ. Չագլիւնի և պ. պ. Ագամեանի և Մանգլինեանի մի սերտած դաս էին ասում, բայց պէտք է խոստովանել, որ այդ հանգամանքը հասարակութեան աչքը չէր ընկնում, որովհետեւ այս դէպքում պէտք է հասարակութիւնը վատ տպաւորութիւն ստանար, իսկ դրա հակառակը եղաւ:

Ասանձին ուշադրութեան արժանի են պ. Չագլիւնի գրիմը, հագուստը, նրա շարժումները և այլն, որի պատճառով պ. Չագլիւն կեանքին հասարակութիւնը անընդհատ ծափահարութիւններով և ընծաներով ընդունեց:

Պ. Տէր-Աստուածատուրեանը Մոլչալնին դարձրեց մի ծառայ, մի բեմամի ծառայ, որ գուրկ

է մինչև տեղամ այդ գասակարգին պատկանողների յանդգնութեանը և իրանց պարտականութեանը անձուներ ձեւերից: Աստուածատուրեանը շատ չերեակցեց իր տաղանդի մասին և ի նկատի ունենար, որ անմշակ իւրաքանչիւր գանձը ոչ ոքի համար պիտանի չէ: Ի վերջոյ խօսում նրա մասին, որ պ. Տէր-Աստուածատուրեանը է աւագի, տեսնելով պոստիցիների իրանից անհամեմատ գերազանց խաղը, որ նա պէտք է ուսումնասիրէր իր գերը, բաւական էր մտածել, որ Մոլչալնիը ապրում է արիւտ տակաւ աստիճանաւորի տանը, պըտըտում է արիւտաւորատ կանանց շրջանի մէջ, ուրիշ նրա ձեւերն էլ պէտք է այդ շրջանին փոքր ի շատէ համեմատ լինէին:

Թարգմանութեան մասին մենք ոչինչ չենք կարող ասել, քանի որ նա տպված չէ և ձեռագիրն էլ մենք չենք նայել: Գրիբոեդովի պատուհասի թարգմանութիւնը, մի և նոյն ժամանակ ոտանաւորով, շատ գեղարար գործ է և գատել նրա մասին գերասանների արտասանութեան և մի անգամ թատրոնի մէջ լսածի համեմատ, մենք անկարելի ենք համարում: Մենք միայն նշանակելով, որ գերասանները մեծ մասամբ ոտանաւորները արտասանելու ժամանակ երգում էին, փոխանակ ձայնի խօսակցական էլ և էջն անելու: Ձը գիտե՞ք այդ հանգամանքը գերասանների ոտանաւոր արտասանելու անկարողութեանը վերաբերել, թէ թարգմանութեանը: Պիեսայի թարգմանիչ, պ. Տէր-Աստուածատուրեանը, մի քանի անգամ բեմ կանչվեցաւ: Արքան մենք մտաբերում ենք, այդ առաջին անգամն է, որ թարգմանողը բեմ է կանչվում:

Մի քանի խօսք էլ կոմիտեին, որ հասարակութեան շնորհակալութեան արժանի է Ստորոգիւն «Արդիւնաւոր պաշտօն» և Գրիբոեդովի պատուհասը հայոց բեմի վրա ներկայացնելու համար, որը, թէպէտ հին, պատմական և հեռաւոր քաղաքի կեանք է նկարագրում, այնու ամենայնիւ հասարակութեանը օգուտ տուցաւ:

Թող մասնագիտով շարունակէ իր բնական շնոր ընթացքը: Թող առօրեայ կեանքից

վերցրած պիեսաներ ներկայացնէ, չը բաւականանայ թարգմանութիւններով, այլ փոխադրել տայ, չը բաւականանայ թարգմանութիւնները և փոխադրութիւնները վարձատրելով, այլ պրեմիաներ նշանակէ լուսերի համար, ինչպէս մենք վաղուց խորհուրդ ենք տուել և այն ժամանակ հայոց թատրոնը շքեղութեան առարկայ, աւելորդ գարդ չի լինի, այլ օգտաւէտ մի հիմնարկութիւն, մի ուսումնարան:

Նրբ մասնագիտովը հայ թատրոնը այն գրութեան կը հասցնէ, որ ժողովուրդը առօրեայ պիեսաները տեսնելու համար նոյն պէս կը լցնէ թատրոնը, ինչպէս և բոման տիական անբնական պիեսաները տեսնելու, այն ժամանակ նա ուղղա՞ծ կը լինի իր սկզբնական սխալը:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

Նրեում ենք դարձեալ որ բացի «Մշակի» խմբագրատունից թիֆլիսցիները կարող են գրել «Մշակին» պ. Շախիբովի պատկերով, որ գտնվում է Ալեքսանդրեան այգու անկիւնում, Գօլովինսկի պրոսպեկտի վրա: Իսկ օտարաքաղաքացիք պէտք է դիմեն ուղղակի մեր խմբագրութեանը:

Լուս. Հայ-Գեարդեար գիւղից մեզ հաղորդում են, որ յունվարի 9-ին գիշերը Յ. Յ. Կանցի ամբողջ ընտանիքը որ հինգ հոգուց է բաղկացած, անյայտ չարագործները սրի են անցրել: Նոյն երեկոյ Յ. Մ. Կանցի խոտի դէպքը դարձեալ անյայտ չարագործները այրել են: Այդ անցքերի մասին մեր թղթակիցը խոստանում է մեզ մի այլ անգամ մանրամասնութիւններ հաղորդել:

Ա.Լ.ԲԱՍՆԻՐԱՊՈԼԻՑ մեզ գրում են: «Սբ ձմեռը անցեալ ձմեռվայ կատարեալ հակապատկերն է: Որքան դժբախտ և ցուրտ էր անցեալ ձմեռը, այնքան մեղմ և տաք է այս տարվանը: Յունվարի երեքին, չորսին և հինգին այն աստիճան տաք էր եղանակը, որ ձիւնի փոխանակ գալիս էր յորդառատ անձրև, ինչպէս մայիս ամսին: Այս տարի թէ քաղաքում և թէ շրջակայ ներքում սաստիկ տարածված են տիֆը և բուբոնը: Կուռ ու ցրտը կուլված ցաւը: Վերջինը շատ քիչ ենք տեսնում մանուկներից»:

գրողի նա, երբ կիմանար, թէ իր կինը լրտեսում է նրա խօսակցութիւնները, թէ Ամէլի ձեռքով կաշառում է սպասաւորներին, թէ... վերջապէս շատ բաներ կարող էր գիտենալ նա, այնուհետև ինքը կորած էր:

Այս այդ մոտաանջութիւնների մէջ դուռը նրան խանր, որ աւելի բարկացած, քան թէ զարմացած իր ամուսնի անանկալ այցելութեան վրա, ներս մտաւ դադանարանը: Հարեմի մէջ փակված կնոջ իր արգելաբանից դուրս գալը, և անպիսի բազմութեան միջից անցնելով, այդ վրանը մտնելը ոչ միայն անպիսի, այլ բոլորովին հակառակ էր կանանցի կանոններին: Եւ դրանով պէտք է բացատրել այն սպանական հայեացքը, որով դարձաւ խանր դէպի իր կինը հարցնելով:

— Ի՞նչ քնք օրը ունես այստեղ:

Սիւրին մնաց չփութված. կարծես, նրա լեզուն կապեցին, և մի խօսք անգամ չը գտաւ պատասխանելու: Նրան տիրեց մի տեսակ երկիւղ, ստորակի երկիւղը իր սարսափելի տիրոջ առջև: Այդ առաջին անգամն էր, որ նա զգում էր իր ոչնչութիւնը, թէ ինքը մասնատական ընտանիքի մէջ մի կրաւորական առարկայ էր, մի փայլուն և խայտառամակ զարդ էր, և ոչ կամքի ու խօսքի տէր արարած, և ոչ ամուսնի ընկեր ու նրա խորհրդակից: Խանր նայելով այդ գեղեցիկ, չփութված առարկայի վրա, որը, որպէս մի ամօթխած հրեշտակ, ներկայանում էր նրա աչքում իր բոլոր քրանիքի հրապուրանքով, մեղմից իր բարկութիւնը, և մօտենալով, բռնեց նրա ձեռքից, նստեցրեց իր մօտ մախմուռի օթոցի վրա, հարցրեց:

— Գիտեմ, մի խնդրե՞ր եկած կը լինես ինձ մօտ, խօսի՞ր, նայելի՞ս, ինչ ունիս ասելու:

Նեղ գրութիւնը մարդուն սրամիտ է չինում: Սիւրին յանկարծ յիշեց այն նշանաւոր բողոքն իր ամուսնական կեանքում, որ սկիզբը դրեց նրա ամբախտութեանը: Նա յիշեց այն տագնապայից գիշերը, երբ ինքը տան և չորս տարեկան մի ամուսնուհի աղջիկ, փառասէր հօր ձեռքով ձգվեցաւ խանրի գրկը: Նա յիշեց այն բոլոր հոգեկան տանջանքը, այն բոլոր դարձելի գոռանքը, որով ինքը, որպէս մի նոր Հովիտիմ, պատերազմում էր խանրի գազանային կրքերի դէմ և չէր կամենում անձատուր լինել: Նա յիշեց այն խօսքը, որ ամբողջութեամբ խանր երգվելով ասաց նրան. «Ինչո՞ւ ինձանից ամեն բան և ես կը տամ քեզ, միայն թէ դու իմն լինես»: Սիւրին ոչինչ չը խնդրեց և անձատուր եղաւ... Այնուհետև խանր մի քանի անգամ կրկնեց նրան մի և նոյն խոստմունքը, բայց Սիւրին միշտ սպասում էր մի կարեւոր դէպքի, որ իր խնդրածը մի նպատակաւորմար և նշանաւոր բան լինէր: Այժմ դէպքը ինքն ըստ ինքեան առաջ եկաւ:

Նա չորեք խանրի առջև, որպէս մի խոնարհ աղերսարկու աստուածներից ամենասարսափելի արձանի առջև, և իր գեղեցիկ, արտասուքով լի աչքերը դէպի վեր բարձրացնելով, ասաց:

— Իմ իշխանը յիշում է, որ մի պարտք ունի ինձ վճարելու:

— Ի՞նչ պարտք, հարցրեց նա զարմանալով:

Սիւրին յիշեցրեց նրան հին խոստմունքը:

— Այդ ես չեմ մոռացել, ասաց խանր ժպտելով, — ես մեղաւոր չեմ, որ քո առջև վատ պարտական գտնվեցայ, դու առհասարակ անհոգ ես քո ապագայիդ վերաբերութեամբ: — Հիմա խնդրե՞ր, ինչ որ կամենում ես, ես իմ խոստմունքը պատրաստ եմ կատարելու:

— Ես քեզանից մեծ բան չեմ խնդրելու, պա-

տասխանեց Սիւրին, տակաւին անշարժ մնալով իր չորած գրութեան մէջ, — ես եկայ խնդրելու, որ ապառա հայ գերիներին և Թորոս իշխանին ձեռնունայն յետ չը դարձնես:

— Ա՛յ... այդ շատ մեծ բան է քո խնդրածը... պատասխանեց խանր զարմացական բացականչութեամբ, և նրա փոքր ինչ մեղմացած դէմքը կրկին մաշվեցաւ սովորական խոտութեամբ: — Գուց կամենում ես ինձ կորցնել տալ մէկը: Վերջինս ամբողջ գանձը:

— Ի՞նչ գանձ:

Խանր սկսեց պատմել նրան բոլորը, ինչ որ լսել էր նրա հօրից և մէկը Ֆրանսիայից առաւելական գանձի մասին, աւելացնելով, թէ մեծ յիմարութիւն կը լինէր իր կողմից մի այսպիսի անպիսի կողպուտը ձեռքից բաց թողնել, մանաւանդ, որ ինքը փողի շատ հարկաւորութիւն ունի:

Սիւրին պատասխանեց, թէ ինքը երբէք յանձն չէր աւել ձեռնարկել իր «իշխանին» անտեղի խնդրեքով և երբեք չէր ցանկանայ զրկել նրան իր շահերից, եթէ գիտենար, որ այդ երեւակայական գանձը գոյութիւն ունի: Բայց նա այդ բոլորը զրպարտութիւն է համարում, թէ և հաղորդողներից մէկը իր հայրն է:

— Ուրեմն ինչ նպատակ ունէին նրանք խաբելու ինձ, հարցրեց խանր խորին վրդովմունքով:

— Նպատակ ունենաւ... պատասխանեց Սիւրին զգալի խռովութեամբ, — և նրանց նպատակը ինձ լաւ յայտնի է, բայց այժմ անյարմար եմ համարում հաղորդել ձեզ, յուսաւով, որ իմ իշխանը կը հաւատայ, որ իր ազգայինը սուտ խօսող չէ:

Այս խօսքերը արտասանեց նա այնպիսի մի զգացմունքով, որ ազդեց խանրի քարացած սրը:

տի վրա, և նա բռնելով իր առջև չորած գեղեցիկ կնոջ թեքից, կրկին նստեցրեց իր մօտ ասելով:

— Ես կը կատարեմ քո խնդիրքը:

Սիւրին ուրախութեամբ ընկաւ իր «իշխանի» գրկը, թեքերը փաթաթեց նրա պարանոցով, և իր բարեբախտ, շատագուցած թէքը սեղմեց նրա շրթունքի վրա: Այդ առաջին անգամն էր, որ մանկահասակ կինը այնպէս վերմ, այնպէս անկեղծ սիրով գրկում էր իր բռնապետին, որին մինչև այն օր միշտ ատել, միշտ անիծել էր իր սրտում:

Այդ միջոցին կրկին հնչեց փողը և հեռուց լսելի եղան ձիւնների սմբակների ձայներ:

— Այժմ հեռացիր, նայելի՛ս, ասաց խանր կանգնելով և Սիւրին իր հետ վեր բարձրացնելով: — Թորոս իշխանը գալիս է:

Սիւրին ծածկվեցաւ իր մոյգ-կապտագոյն չաւարի մէջ, ձգեց երեսի վրա անթափանցիկ քօղը և դուրս եկաւ գաղտնարանից: Մոտեց առջև նրան սպասում էր ծերունի ներքինապետը, որը առաջ ընկաւ և տարաւ տիկնոջը մինչև իր վրանը: Այնուհետ միայն հարցրեց ծերունին:

— Զաջողվեցաւ:

Սիւրին, ուրախութեան ժպիտը երեսին, պատասխանեց:

— Այո՛:

— Փառք Աստուծոյ, բացականչեց ծերունին իր գոհունակ ձեռքերը բարձրացնելով դէպի երկինքը:

(Կը շարունակվի)